

ԳՐԻԳՈՐ (ՄՂՏ.) ՆԱԽԻՉԵՒԱՆՅԻ. — Քրձ. 40 տարուան աշխատութիւնս մը Ս. Յակոբի վանքին, որուն նուիրած է իր բոլոր հայրենի ժառանգութիւնը, ինչպէս նաև 1650ին, Կ. Պոլիս ընդորինակուած պատկերագրող Աւետարան մը, ՄՁ. թ. 51 որուն յիշատակարանէն կը քաղենք հետեւեալը. «... սբ. աւետարանացանկոցոց եղեալ, մահտեսի Գրիգորն, որ մանուկ տիօք ի. ամեայ, ի քաղաքէն Նախիջուանայ եկեալ յերկրպագութիւն ամ. ընկալ սբ. Գերեզմանին Քսի. և տեսեալ զվայելչութիւն սբ. ուխտիս թողեալ զհայրենական երկիրն և զգաւառն հաճեցաւ բնակիլ ի սբ. քաղաքս Երուսաղէմ՝ զոր եւ մտեալ ի սպասու սրբոյն Յակոբոյ մենաստանին բազում աշխատութեամբ եւ մտերմութեամբ ծառայեաց զամս. Ս. և այլ առաւել մեծաւ ջանիւ մինչ ի խորին ծերութիւն հասեալ. որոյ տեսեալ զունայնութիւն կենցաղոյս վաճառեաց զամ ինչս իւր զոր ժողովեալ էր ի հալալ ընչից իւրոց, և սապաւ, ա. ջաղաց, ա. փռու, և մէկ տուն, և եզ յիշատակ ի դուռն սրբոյն Յակոբոյ, և ոչ այսու կարաց ժուժել, այլ և մեծաւ աշխատութեամբ զիմեալ ի յարքայանիս քաղաքն ի Կ. Պոլիս, և անդ կացեալ տարով և այլ աւելի. և բազում ծախիւք և ջերմեռանդ փափաքմամբ եւ գծագրել զսբ. աւետարանս և զարգարեաց ոսկով և արծաթով, և բերեալ եզ յիշատակ ի դուռն սբ. Գերեզմանին Քսի.: ... Յիշեսջիք ի մաքրափայլ յազօթս ձեր զմահտեսի Գրիգորն, և զմայրն Սոււմար, եւ զեղբարքն զՅովսեփն եւ զՊօղոսն, ... »: Այս Աւետարանը գրաւի գրուած ըլլալով՝ 1726ին, Արապկերցի մհա. Յովսէփ եւ մհա. Գրիգոր գրաւէ կ'ազատեն և կը նուիրեն Ս. Յակոբի վանքին, և յոյն ձեռագրին մէջ կը գրեն յատուկ յիշատակարան մը: (Մապ. Յոց. տեար, Ե. էջ 341-344):

ԳՐԻԳՈՐԻՍ ՈՍԿԵՐԻՉԵԱՆ. ԿՍՐՆԵՅԻ. — Քրձ. Երուսաղէմի մէջ, Ս. Յակոբի յիշատակ կը թողու միջերանոց մը. վախճանած է 1902ին:

ԳՐԻԳՈՐ Ա. ՊԵ. ԵՉԵԿԻԷԼԵԱՆ, ԵԴԵՍՍՅԻ. — (670-697) (Յպե. էջ 32):

ԳՐԻԳՈՐ Բ. ՊԵ. (981-1006) (Յպե. էջ 35):

ԳՐԻԳՈՐ Գ. ՊԵ. — (1358-1366) Ասոր օրով, Ստեփանոս կրօնաւոր ՊԹ թուին (=1360) Ս. Յակոբի մէջ կ'ընդօրինակէ նարնկ